«Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և մեթոդաբանությունը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » _____ 2023 N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԵՐԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասով ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

« » _____ N…-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԵՐԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և կիրառվող մեթոդաբանությունը։
2. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության չորայնության ցուցիչների տեղեկագրում ընդգրկված Սելյանինովի հիդրոթերմիկ խոնավության գործակիցը և մեթոդաբանությունը կիրառելի է Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման համար։
3. Սույն Հավելվածի իմաստով կիրառվող հասկացություններն են՝

- **Սելյանինովի հիդրոթերմիկ խոնավության գործակից** (այսուհետ՝ ՀԹԳ, [մմ/^{0}C])՝ գործակից, որը հաշվարկվում է չորրորդ ենթակետում բերված բանաձևով,
- **ցուցանիշ՝** օդերևութաբանական պարամետրեր, որոնք օգտագործվում են Երաշտի պայմանների հաշվարկման համար,
- **երաշտի ինտենսիվություն՝** որոշակի ժամանակահատվածում կոնկրետ տեղանքի չորության վիճակ, որը գնահատվում է օդերևութաբանական կայանների դիտարկումներից ստացված համապատասխան ցուցանիշների կիրառմամբ,
- **հարակից տարածքներ՝** օդերևութաբանական կայանների դիտարկումներից դուրս տարածքներ։

3. Երաշտային պայմանների հաշվարկման հիմնական ցուցանիշներն են տեղումները և ջերմաստիճանը։
4. ՀԹԳ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Որտեղ՝

∑R – մթնոլորտային տեղումների քանակի գումարն է գնահատվող տասնօրյակի և դրան նախորդող երկու տասնօրյակների համար,

∑T - 10°C -ից մեծ կամ հավասար միջին օրական ջերմատիճանների գումարն է գնահատվող տասնօրյակի և դրան նախորդող երկու տասնօրյակների համար։

5. Սելյանինովի ՀԹԳ-ի արժեքների հիման վրա Հայաստանի կլիմայական պայմաններում առանձնացվում են երաշտի ինտենսիվության 5 կարգ՝

- Շատ ուժեղ 0-0.19 (կարգ 1),
- Ուժեղ0.2-0.39 (կարգ 2),
- Միջին 0.4-0.6 (կարգ 3),
- Թույլ 0.61-0.75 (կարգ 4),
- Երաշտի բացակայություն 0.76-5.0 (կարգ 5)։

6. Հայաստանի կլիմայական պայմաններում տարվա տաք ժամանակահատվածում՝ պայմանավորված Հայաստանի լեռնային ռելիեֆով, տեղային տեղումներով և կոնվեկտիվ պրոցեսներով, երաշտի ինտենսիվության ճշգրիտ գնահատման համար լրացուցիչ իրականացվում է սինօպտիկական իրավիճակի, օդերևութաբանական ռադարի և արբանյակային դիտարկումների վերլուծություն։